



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

24/հոկտեմբերի/2024 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու⁹... անդամներ:

Բացակա էին՝

*Մարիշև Մկրտչյանը Ձերայր Բաբայանը,
 Զարմանի Զահալյանը, Կարպ Զովասթյանը, Մուրադյան
 Ավետիսյանը*

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Կեսուտ գյուղի վարչական ղեկավար Արտակ Բագրատյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը , առաջատար մասնագետ Անուշ Առաքելյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական՝ 2024 թվականի հոկտեմբերի 24-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազի՝ համայնքի շահերի պաշտպանության հայց ներկայացնելու վերաբերյալ ուղղված առաջարկությունը քննարկելու և հայցը ներկայացնելու իրավասությունը զիջելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Դրամական օգնություն տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջադար մասնագետ Ա. Առաքելյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ

ա/ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0201-0097 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20092024-10-0005) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,3354 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 70 000 (յոթանասուն հազար) դրամ,

բ/ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0208-0023 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20092024-10-0021) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,4197 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 180000 (հարյուր ութսուն հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում Գնդեվազ գյուղում գտնվող՝ պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.08236 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0605-0058) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 10000 (տաս հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱՋԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱԿԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԴՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՑԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով սահմանված սկզբունքներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ քննարկելով ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազի՝ ս/թ հոկտեմբերի 14-ի N 66/2492-24 գրությունը՝

1. Հաշվի առնելով համայնքի ավագանու կազմում իրավաբանական կրթությամբ անդամ չլինելու հանգամանքը, ինչպես նաև՝ ավագանու, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի իրավական ակտերի ուսումնասիրությամբ և գործող օրենսդրությանը դրանց համապատասխանեցմամբ զբաղվող իրավական հարցերի հանձնաժողով չունենալու հանգամանքը՝ Գնդեվազ գյուղական համայնքի ղեկավարի՝ 14.01.2007թ. աճուրդային հանձնաժողովի թիվ 2 արձանագրության հիման վրա կայացրած և 18.11.2013թ. թիվ 47 որոշումներով, ինչպես նաև՝ որպես հետևանք 21.04.2014թ. Գնդեվազ համայնքի և «Գեոթիմ» ՓԲԸ-ի միջև 10-016-0222-0057, 10-016-0220-0104, 10-016-0224-0088, 10-016-0226-0044 ծածկագրերով հողամասերի վերաբերյալ կնքված վարձակալության պայմանագրերով, 14.01.2016թ. այդ հողամասերի վերաբերյալ կնքված համաձայնագրերով, 19.12.2016թ. կնքված համաձայնագրերով՝ 10-016-0226-0069 և 10-016-0226-0069 ծածկագրերով հողամասերի վարձակալության պայմանագրերի վերաբերյալ, 12.04.2017թ. Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից այդ հողամասերի վերաբերյալ կնքված համաձայնագրերով խախտված համայնքային շահերի պաշտպանության հայցը ներկայացնելու իրավասությունը զիջել ՀՀ Վայոց ձոր մարզի դատախազությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Վայոց ձոր մարզի դատախազությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-----9 Դեմ-----0 Ձեռնպահ-----0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի հետևյալ բնակիչներին՝

ա/ 300000 (երեք հարյուր հազար) դրամ Արմիկ Հայկի Ալեքսանյանին,

բ/ 150000 (հարյուր հիսուն հազար) դրամ՝ Օնիկ Հայկի Եղյանին

դ/100000-ական (հարյուր հազարական) դրամ՝ Սիլվա Բենիկի Անտոնյանին և Միսակ Ժորայի Գրիգորյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Ավագանու անդամներ՝

Ավագանու անդամներ	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	

Վարդագարյան Աննա Վասակի	<i>[Signature]</i>
Խաչատրյան Գոհար Բարկենի	<i>[Signature]</i>
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>[Signature]</i>
Այվազյան Մխիթար Վուրդյայի	<i>[Signature]</i>
Մկրտչյան Մարինե Մայիսի	<i>բացակա</i>
Բաբայան Ժիրայր Ժորայի	<i>բացակա</i>
Մնացականյան Արկաղի Ալբերտի	<i>[Signature]</i>
Գևորգյան Մանան Աղվանի	<i>[Signature]</i>
Վահանյան Վարուժան Կնյազի	<i>բացակա</i>
Հովակիմյան Ազատ Հայրիկի	<i>բացակա</i>
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	<i>բացակա</i>

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

Վահագն Արսենյան



Նիստին արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը

[Signature]